## Դ. ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Այբը բէնին,
Գիմը գային,
Եչը գային,
Գաբրէլ տային,
Ախսարային [1])
Տուռը տարին,
Երկու հարուր
Զուպուխ զարկին։
Ամա՞ն ուստա,
Փէշնէ վուրմա.
Թէննէրէ տէ
Թօփ սալաքա [2])։
Ծովին օրթան ոսկի ամաններս կը
վլայի,
Վերէն տաք տաք հացի մը հոտ
էկաւ։
Կնա նայէ վո՞վ էկաւ.
—Երկու ձիաւոր էկաւ.
Մէկը՝ պահապան,
Մէկը պախճէպան։
—Պահապան, պահապան, վո՞ւր կ՚եր-
թաս.
—Հիւանտիս տունը կ,երթամ.
Պալլինքս պարձիս տակը մոռցայ,
Վո՞վ առնէ նէ՝ լեզուն փիս ըլլայ։

2.

Այբ, բէն, գիմ—պապադ ճէքիմ.
Դա, եչ, զա—պապադ տեսայ.
Է, ըթ, թօ—պապադ թօթօ,
Ժէ, ինի, լիւն—սուլու իլիմօն,
Խէ, ծա, կէն—պապային խալ-
փախը ծակեն,
Հօ, ձա, խատ—պապադ սախաթ,
Ճէ, մէն, յի—Խաղը ԽէմԽէնի,
Նու, շա, ո—բռաֆտա ծամտան ֆօ [3])
Չա, պէ, ջէ—Խաղը ֆչէ,
Ռա, սէ, վէվ—պապադ սև է,
Տիյօն, ըրէ, ցօ—փարայի մը խաղ
լեցու [4]),
Հիյուն, փիյուր, քէ — պապադ
բիւըֆէ,
Եւ, օ, ֆէ—պապադ Մօսկօֆ է։

3.

Երկուշաբթի, շաբթի շաբթի,
Երեքշաբթի հաց կը շաղուեմ,
Չորեքշաբթի լաթ կը վլամ,
Հինգշաբթի կար կը կարեմ,
Ուրբաթ պաղնիք կ՚երթամ,
Շաբաթ տուն կը մաքրեմ [5])
Կիրակի վո՞վ կը պանի քի էս պանիմ։

4.

Երկուշաբթի, շըբթի շըբթի,
Իրեքշաբթի լաթ վլացի,
Չորեքշաբթի հաց շաղուեցի,

---

[1]) Ախսարայ թաղ մըն է Պօլսոյ մէջ։

[2]) Չորս տաճկերէն տողերուն թարգմանութիւնն է.
Ա՜յ վարպետ,
Ուժով մի զարնիր,
Կաթսայի մէջ
Կլորիկ աղցան։

[3]) Թարգմ. պահարանին մէջ աշտանակ դիր։

[4]) Var. պապադ ցօցօ։

[5]) Var. շաբաթ թախտակ կը սրբեմ։

Հինգշաբթի կտաւ կործեցի,
Ուրբաթ պաղնիք կացի,
Շաբաթ, շաբաթն էլաւ, ինչ ընեմ,
Կիրակի վով կը պանի ֆի էս պանեմ։

5.

Այսօր անճառ,
Վաղը փաճճար,
Երկու հացին
Մէկ տրացին,
Կատուն մեռաւ,
Վրան լացին,
Պալըխլըյիճ [2]),
Տուռը տարին [3]),
Վարդապետին
Քիթը խածին,
Վա, դապետը
Վայ վայ կանչեց,
Տղան կնաց,
Հէքիմ կանչեց,
Հէքիմճ էկաւ,
Քիթը կարեց,
Տէր Մանուկը
Կայներ կուլայ,
Էշուն աշկը
Կը պլպլայ [4])։

6.

Մէկ էրկու՝ էրկնիաս,
Իրեք չորս՝ չորնաս,
Հինգ վեց՝ վերնաս,
Օխտը ութը՝ վուր կ'երթաս,
Ինը տասը՝ ժամ կ'երթամ,
Տասնը մէկին տուն կուգամ,
Տասվերկուքին հոգիս տամ։

7.

Արգև կուգայ, ծուն կուգայ,
Հաճի պապաճ տուն կուգայ,
Փիլավ կ'եփեմ եաղ չիքայ։
Քէլ Մարտիրոսին տուն չիքայ [5])։

8.

Կրակլիկ [6]), վար Լկու,
Եաքախ ձգեմ, եաճ էկու,
Ըս պաներէն վազ էկու [8])։

9.

Լուսընկայ, լուսընկայ,
Աշկերդ սև չամիչ, տուն կլորիկ լուսնկայ,
Ամմէնքը կ'ուզեն ֆի մութն կայ,
Էս կ'ուզեմ ֆի լուսն կայ։

10.

Աղօթեմ, աղօթեմ,
Աղին ամանը խոթեմ,
Ընկէ հանեմ, պերանս խոթեմ։

11.

Աճէմ, աճէմ,
Քիթդ կճեմ,
Պերանդ պաց,
Մէջը խմջեմ։ [8])

---

[1]) Նախորդին հնագոյն խմբագրութիւնն է, երկուքն այլ ծոյլ հարսին պատմածն են։

[2]) Մեծ գերեզմանատան մը անունն է Պոլսոյ մէջ։

[3]) Var. պացին կամ կացին։

[4]) Վերջի չորս տողը հնոց մէջ միայն կայ. Նորերը պակաս կ'երգեն։

[5]) Տղայք կ'երգեն անձրև կամ ձիւն տեղացած ժամանակ։

[6]) Var. *աթէշ պէօճէյի կամ լուս պէօճէյի*։

[7]) Տղայք կ'երգեն կայծոռիկ բռնելու համար, իբր թէ անասնիկը դէպի երգող ձայնին կը դիմէ։

[8]) Կ'երգուի պարսիկները բարկացնելու համար։

12.
Կառավարիչ,
Կարմիր չամիչ,
Պատին վրայ,
Երկու չամիչ [1]։

13.
Վաղը կիրակի է,
Քիթդ բոխի է,
Պերանդ խայմախ է,
Ծունը քեզի ապլա է։

14.
Սատանայ, սատանայ,
Պոչիդ տակը պան մը կայ,
Ծատը քեզի քիչը ընծի [2]։

15.
Սատուծու բարին,
Կլօխդ քարին,
Թախտա պախպալին։

16.
Մրսի վրադ [3]),
Իմս ա վրադ,
Խօրօզ պապան,
Թստէ վրադ։

17.
Հափիքայի զօրավարի,
Եւ հաւկիթի արդարոց,
Զէվզէկլիստան կատարեցաւ [4])։

18.
Մ'ամուկ, մամուկ, վուր կ'երթաս,
—Երուսաղըմ ժամ կ'երթամ [5])։

18.
Կուտած փախլա, Ծակ թէնճիրէ [6])։

19.
Վանցի.—
Թուք էրէսը, անցի [7])։

20.
Կծծի, կծծի,—
Թէքիրտաղցի,
Տուանն էտին կմթեցի [8])։

21.
Ամձն տնտես, Հիւանդ էմ էս,
—Զօրպա էփեմ կ'ուտէս։

---

[1]) Կ'երգուի վերակացուները ծաղրելու համար։

[2]) Կորսուած բան մը գտնելու համար՝ չորս ոտքի վրայ կ'սկսեն պտտիլ և այս տունը երգելով փնտռել։

[3]) Իմա մուրս ի վրադ։

[4]) Հափիթա, հաւկիթ և զէվզէկ կը նշանակեն «թեթևամիտ», բուն նպատակը այս բառերը ուղղել է գիմացիներին, ամբողջը յարմարցուած է Օրացոյցի մէջ Վարդանանց զօրավարաց յիշատակութեան ձևովի։

[5]) Կ'ըսուի սարդ տեսնելու ժամանակ. սարդը իբր թէ այս երգէն կը փախչի։

[6]) Չէչոտ երեսովները ծաղրելու համար։

[7]) Կ'ըսուի վանեցիները ծաղրելու համար։

[8]) Կ'ըսուի ռոտոսթոցիները ծաղրելու համար։